Кроме того, была сделана попытка получить дополнительную информацию о разрушении кафедрального собора в Аруче с помощью изучения старых фотографий. Известно, что большая часть фотографий *армянских храмов* сделаны Д.И. Ермаковым (1845-1916гг.) и Т.А. Тораманяном (1864-1934гг.). Есть также частные коллекции фотографий отдельных путешественников, таких как британец (ирландец) Линч Генри Финис Блос – известный географ и путешественник, общественно-политический деятель (член английского парламента в 1906–1910гг.), член-корреспондент Королевского Географического общества. В 1893-1894гг. и в 1898г. он совершил две научно-исследовательских экспедиции в Армению, результаты которых вскоре опубликовал в Тифлисе (Линч, 1910, 2015).

В результате наших поисков были отобраны старые фотографии, на которых есть изображения всех 4-х стен Аручаванка до восстановительных работ в XX веке (рис.4,5). Сравнительный анализ фотографий на рис.4а и 4б показывает, что они сделаны в разное время, причем рисунок 4б – позже. Отметим наиболее существенные отличительные детали этих 2-х снимков:

1) на фотографии 4б обвалились некоторые фрагменты – на правой стороне крыши, над вторым и третьим окнами справа от двери, в верхнем углу стены слева от входной двери;

2) расщелина в верхнем углу стены слева от входной двери, переходящая на крышу, увеличилась и почти достигла вершины крыши;



Рис.4. а) Снимок южной стены и фрагмента восточного торца Аручаванка; б) Снимок южной стены и фрагмента восточного торца Аручаванка (более поздняя фотография); в) Современный снимок верхней части восточной стены Аручаванка (снимок 4в сделан в 2017г.).

3) на рис.4а с правой стороны фотографии почти наполовину закрывает обзор большей части восточного торца Аручаванка некое строение, напоминающее крепостную башню, а на рис.4б это строение уже частично разрушилось и закрывает обзор всего лишь на треть;

4) на рис.4а видно, что внутреннее пространство большинства сводчатых окон южной стены замурованы плотной кладкой из камня, тогда как на рисунке 4б большинство этих окон уже открыты.

Как было показано выше, на фотографиях 4а и 4б невозможно полностью и детально рассмотреть состояние кладки восточного торца кафедрального собора в с. Аруч. Однако, очевидно, что в верхней части восточной стены церкви (над сводами арок) разрушения минимальны. Поэтому имеет смысл провести визуальный анализ соответствующего фрагмента современного снимка восточной стены (рис.4в).

Как видно на фотографии кладка верхней надсводовой части восточного торца собора в Аруче практически не нарушена и представлена в основном туфовыми блоками 2-ой и 3-ей групп.

На рисунке 5а представлен снимок (20-30гг. XX века) Аручского кафедрального собора с северо-западной стороны. Данный ракурс не позволяет подробно разглядеть центральный и дальний (восточный) сегменты северной стены, однако, западный торец храма может быть проанализирован достаточно детально.




Рис.5. а) Фотография северной стены и западного торца Аручаванка; б) Современный снимок западной стены Аручаванка (снимок 5б сделан в 2017г.).

Вернемся к одному из главных пунктов в аргументации С.А. Пирузяна: «...в селе Аруч, через западный фасад церкви Св. Григора и примыкающую к нему северную стену проходит зияющая трещина, возникшая в результате землетрясения» (Пирузян и др., 1984). Визуальное восприятие фотографии на рис.5а позволяет сделать следующие выводы:

а) на примыкающей к западному фасаду северной стене (во всяком случае – в пределах ее ближнего западного сегмента) никакой зияющей трещины не наблюдается;

б) на левой верхней стороне западного фасада фиксируется близвертикальная трещина – от крыши до верхней кромки сводового окна, находящегося слева от входной двери;

в) рассматривая трещину под большим увеличением, трудно ее квалифицировать как *“зияющая трещина”*.

Последний вывод подтвердился после внимательного изучения фрагмента с *“зияющей”* трещиной на современном снимке западной стены Аручаванка (рис.5б). При современных (XX век) восстановительно-реставрационных работах было сделано следующее:

а) на верхнем отрезке мастера выправили исходные (материнские) туфовые блоки и закрепили их цементирующим раствором;

б) на нижнем отрезке (3 ряда блоков) – начиная от верхнего обрамления сводового окна – трещину просто залили цементирующим раствором.

IV. Интересные данные были выявлены при изучении материалов Государственного архива истории Армении. Одна запись свидетельствует, что в 1831г. Аручаванк был в сохранности (фонд 90, опись 1, дело 96, 1831г.), а другая запись, датируемая 1870г., фиксирует значительные разрушения церкви. Таким образом, землетрясение, разрушившее собор Св. Григория в Аруче произошло во временном интервале 1831-1870гг., но никак не в 972г. Анализ региональных каталогов сильных землетрясений указывает, что этим сейсмическим событием является Араратское землетрясение 04.07.1840г. ( $M=7,4$ ;  $I=9-10$  баллов). Очевидец этого катастрофического землетрясения Абел Мхитарян пишет: *«...южная и западная стены кафедрального собора в Талине разрушены до восточной двери от землетрясения 1840г.»* (Мхитарян, 1870). Описываемые А. Мхитаряном разрушения кафедрального собора в Талине зафиксированы на старой фотографии (рис.6а).




Рис.6. а) Руины кафедрального собора в Талине; б) Крепость XI – XIII веков в селе Неркин Талин (Даштадем). Видны следы разрушения от сильного землетрясения.

А ведь именно эти разрушения С.А. Пирузян относит к Аручскому землетрясению 972г. в качестве одного из своих главных аргументов: «...в соседнем поселении Талин разрушены большая часть южной и западной стен, а также купол кафедрального собора Талинского монастыря.» (Пирузян и др., 1984).

Разрушения церквей в Даштадеме также привязываются к сейсмическому событию 04.07.1840г. (Karakhanyan A. et al., 2010).

Полевые макросейсмические обследования стен и оборонительных башен Даштадемской крепости (XII век) позволили зафиксировать отчетливые следы разрушения от сильного сейсмического события – скорее всего землетрясения 04.07.1840г. (рис.6б). На наш взгляд, в этом случае двух мнений быть не может. Так как крепостные стены – это фортификационные сооружения, выполняющие важную роль при оборонительных действиях во время войны, то трудно себе представить, что Багратиды не восстановили крепостные стены Даштадема после их разрушения от землетрясения 972г. в целях безопасности юго-восточных границ Анийского царства.

### **Заключение**

В результате реанализа всех имеющихся сведений (включая фотофакты) по Аручаванку, кафедральному собору в Талине и другим историческим сооружениям региона, можно со всей определенностью утверждать, что основной причиной их разрушений является Араратское землетрясение 04.07.1840г.

Учитывая перманентный характер русско-турецких войн в XIX веке (1806-1812гг.; 1828-1829гг.; 1853-1856гг.; 1877-1878гг.; 1914-1918гг.) и назревающую революционную ситуацию внутри страны, по нашему мнению Российская империя уже была неспособна оказывать реальную помощь в реконструкции и восстановлении разрушенных землетрясением церквей, имеющихся в армянских провинциях и придавать этому особо важное значение. Сама Армения была активно вовлечена в это противостояние из-за угрозы геноцида, и все имеющиеся силы и средства уходили на борьбу с турецкими захватчиками. Поэтому можно предположить, что после Араратского землетрясения 04.07.1840г. и до частичной реконструкции Аручаванка (в 1946-48гг.), никаких других восстановительных работ не проводилось.

Следовательно, фотофакты (старые снимки), использованные нами при данном реанализе можно считать прямыми “отпечатками” макросейсмических последствий Араратского землетрясения 04.07.1840г.

Полученные в данной работе результаты позволяют заключить, что реальность землетрясения 972г. маловероятна, и, соответственно, разрушения церквей и храмов в Аруче и Талине являются следствием сейсмических воздействий Араратского землетрясения 04.07.1840г.

## Լիտերատուրա

- Լինչ Գ. Փ. Բ. 1910, Արմենիա: Փութեվե օչերկի և էյուդյ. (վ 2 տ.) / Տ. 1: Րուսկիե քրովինցի. — 599 ս.; ս իլլ. վ տեքստե և 61 Լիստ իլլ., քլանօվ և կարտ.; Տ. 2: Տուրեքկիե քրովինցի. — 676 ս.; ս իլլ. վ տեքստե և 55 Լ. իլլ., քլանօվ և կարտ. /Տիֆլիս, Իզդանիե Տորգօվոյո Դօմա " Ի.Է.Քիտօև և Կ° ", 1306 սթր.
- Լինչ Գ. Փ. Բ. 2015, Արմենիա: Փութեվե օչերկի և էյուդյ. (վ 2 տ.) / Րեքրինտնօվ իզդանիե 1910դ. ՏՔԲ.: Ալֆարետ, /Տ. 1: Րուսկիե քրովինցի. — 636 ս., իլ., 60 Լ. իլ., կարտ.; Տ. 2: Տուրեքկիե քրովինցի. — 696 ս., իլ., 55 Լ. իլ., կարտ.
- Մաթեվօսյան Ա.Տ. 1988, Քլանտնյե շաքիսի Արմենյանսկի Րուքօքիսեյ. V-XII դար. Եր., իզդ. ԱՊ ԱրՄՏՏՐ, ս. 97-98.
- Մուսկետօվ Ի.Վ., Օրլօվ Ա.Ք. 1893, Կատալօգ շեմլետրյասենի Րուսկիյոյ Իմքերի (Ցաքիսկի Րուսկօյո Դեօգրաֆիչեսկօյո Օբշչեստվա, տօմ XXVI, Տ.-Քետերբուրգ).
- Մխիտարյան Ա. 1870, Օքիսանիե Մարմարաշենա վ Տիրաքե. Վադարաքաթ, ս.24.
- Քիրուզյան Տ.Ա. 1969, Օքիտ զետալնօյո շեյսմիչեսկօյո րայօնիրօվանիա տերրիտօրի Օղնօյոյ Երևանսկօյո րայօնա (յօդօ-շաքադնա շաքթ ԱրՄ.ՏՏՐ և քրիլեգադյօյո րայօնյ). Երևան, 92 ս.
- Քիրուզյան Տ.Ա., Մաթեվօսյան Ա.Տ. և Տաքսուվարյան Լ.Վ. 1984, Տրաք Ցվարտնօ: քրիչինյա և Րեքսիա զարուքանի. / Իստօրիկօ-ֆիլօլօգիչեսկիյ յուրնալ, № 3, ս.189-194.
- Ստեփանյան Վ. Ա. 1964, Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա Մերձալպյան: Երեվան, "Հայաստան" իր., 247 էջ:
- Berberian M. 1997, Seismic sources of the Trans-Caucasian historical earthquakes, in Historical and Prehistorical Earthquakes in the Caucasus, edited by D. Giardini and S. Balassanian, ILP Publ. 333, NATO ASI Ser. 28 (Kluwer Academic Publishers), p. 233-311.
- Guidoboni E. and Traina G. 1995, A new catalogue of earthquakes in the historical Armenian area from antiquity to the 12th century, Ann. Geofis., XXXVIII (1), p. 85-147.
- Karakhanyan A., Abgaryan E., Arakelyan, A., Balasanyan V., Avagyan, A., Nazaretyan S., Mkhitarayan K., Tigranyan M. 2010, Seismic hazard assessment for the construction site of a new power unit of the Armenian NPP/ Final Report/Seismological database/"NorAtom" Consortium, Draft Version, marsh, 300p.
- Seismic Hazard. 2011, Assessment for the Construction Site of a New Power Unit of the Armenian NPP, "NorAtom" Consortium, Final Report, Yerevan.
- Shebalin, N. and R. Tatevossian. 1997, Catalogue of large historical earthquakes of the Caucasus, in Historical and Prehistorical Earthquakes in the Caucasus, edited by D. Giardini and S. Balassanian, ILP Publication 333, NATO ASI Ser. 28 (Kluwer Academic Publishers), p.201-232.

Րեցենզենտ Ա. Ավադյան

## 972թ-ի ԱՐՈՒՃԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱԿՐՈՍԵՑՄԱՐԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մ.Վ. Բալասանյան

Ամփոփում

Երևանի խզվաճքի սեյսմօտեկտօնիկայի ներուժի ( $M_{max}$ -ի արժեքը) զնահատմանն ուղղվաճ Արմավիրի (հյուսիս-արևմտյան) սեզմենտի ուսումնասիրությունը բացահայտեց մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են հասանելի նյութերի մանրամասն վերլուծություն: Մասնավորապես, քննադատորեն վերանայվել են բոլոր առկա տեղեկությունները՝ հաշվի առնելով 972թ-ի Արուճի երկրաշարժի մասին նոր տվյալները, որը, հավանաբար, գտնվում է Երևանի խզվաճքի գոտում: Այս

աշխատանքից ստացված արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ ենթադրությունը. հաշվի առնելով այն, որ 972թ. երկրաշարժը քիչ հավանական է, և, համապատասխանաբար, Սուրբ Գրիգոր եկեղեցու ավերումը կապված է 1840թ-ի Արարատի երկրաշարժի սեյսմիկ ազդեցության հետ, հետևաբար, Երևանի խզվածքի հյուսիս-արևմտյան հատվածի  $M_{\max}$ -ը պետք է վերագնահատվի իր թվային արժեքի իջեցման ուղղությամբ:

## **THE RESULTS OF MACROSEISMIC RESEARCH OF THE ARUCH EARTHQUAKE IN 972**

**S.V. Balasanyan**

### **Abstract**

The study of the Armavir (north-western) segment, to assess the seismotectonic potential of the Yerevan fault (the value of  $M_{\max}$ ), revealed a number of problems requiring detailed reanalysis of all the available materials. In particular, all available data were critically reviewed, taking into account new information about the Aruch earthquake in 972, which is probably located in the zone of the Yerevan fault. The results obtained in this work allow us to make the following assumption: given that the reality of the earthquake in 972 is unlikely, and, accordingly, the destruction of Cathedral of Aruch is connected with the seismic influence of the Ararat earthquake in 1840, therefore, the  $M_{\max}$  of the north-western segment of the Yerevan fault should be re-evaluated to the direction of lowering its numerical value.

**ԼԵՎՈՆ ԱՐՄԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆՑ**  
(ծննդյան 125-ամյակին)



Լրացավ ականավոր գիտնական, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Լևոն Արսենի Վարդանյանցի ծննդյան 125 ամյակը: Լ.Ա. Վարդանյանցը ծնվել է 1883թ. սեպտեմբերի 28-ին Եկատերինոդարում (այժմ Կրասնոդար), ծագումով հայ քահանայի ընտանիքում: 1911թ. ավարտել է Եկատերինոդարի արական գիմնազիան, ապա, 1918թ. Նովոչերկասկի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետը, ստանալով լեռնային ինժեների որակավորում: Հետագա տարիներին, ընդհուպ մինչև Լենինգրադ (այժմ Սանկտ-Պետերբուրգ) տեղափոխվելը (1927թ.) Լ.Ա.

Վարդանյանցը աշխատել է Կրասնոդարի արդյունաբերական հետախուզման Հարավ-Արևելյան մարզային վարչությունում (1921-1927թթ.), Արևմտյան Սիբիրի երկրաբանական վարչությունում (1931թ.), ՍՍՀՄ ԳԱ Մեյմոլոգիական ինստիտուտում, Հյուսիս-Կովկասյան և Ազով-Սև-ծովյան երկրաբանական վարչություններում (1932-1936թթ.): 1936-ից մինչև իր վախճանը (1971թ. մայիսի 18ը), նրա գիտական գործունեությունը կապված է եղել Լենինգրադի համամիութենական գիտահետազոտական երկրաբանական ինստիտուտի հետ (ВСЕСИ): Այստեղ 1939թ. նա հաջողությամբ պաշտպանել է իր դոկտորական թեզը, ստանալով նաև պրոֆեսորի կոչում (1940թ.): Հայրենական Մեծ պատերազմի տարիներին նա Հյուսիս-Կովկասյան երկրաբանական վարչության խորհրդատուն էր, Ուզբեկստանի երկրաբանական վարչության գլխավոր երկրաբանն ու խորհրդատուն (1941-1942թթ.): 1926թ. Լ.Ա. Վարդանյանցը անդամագրվել է Երկրաբանական Կոմիտեի կազմում և դարձել Կովկասի երկրաբանական դպրոցի հիմնադիր, պրոֆ. Ա.Պ.Գերասիմովի կողմից կազմակերպված Ղրիմ-Կովկաս բաժնի ակտիվ մասնակից:

Զարմանալի է Լ.Ա. Վարդանյանցի գիտական հետաքրքրությունների չափազանց լայն շրջանակը՝ սեյսմատեկտոնիկա, շերտագրություն և երկրաբանություն, մագմայականություն և մետաղածնություն, բյուրեղաօպտիկա և երկրաքիմիա, գեոմորֆոլոգիա և չորրորդական երկրաբանություն - ահա նրա հետազոտությունների և գիտական

հրապարակումների ոչ լրիվ ցանկը: Լ.Ա. Վարդանյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատանքների այդ թվում Կովկասի երկրաբանությանը նվիրված առաջին ծավալուն ընդհանրացումներին, բյուրեղօպտիկայի տեսական հարցերին, Ռուսական պլատֆորմի բյուրեղային հիմքի երկրաբանությանը և կառուցվածքին, սեյսմատեկտոնիկային:

Սովորաբար ընդգծում են Լ.Ա. Վարդանյանցի գիտական գործունեության երեք հիմնական ուղղությունները՝ Կովկասի երկրաբանություն, բյուրեղօպտիկա եւ ֆյոդորովյան մեթոդի տեսություն, Ռուսական պլատֆորմի բյուրեղային հիմքի կառուցվածք: Այս շարքը անհրաժեշտ է լրացնել նաև Կովկասի սեյսմատեկտոնիկային նվիրված նրա հետազոտությունները:

Լ.Ա. Վարդանյանը քարտեզագրել է Կովկասի առավել դժվարամատչելի մասը՝ լեռնային Օսիան, անջատել Կազբեկի և Կախեթիայի դիաբազային գոտիները, քարտեզագրել և նկարագրել Կովկասի նեոփնտրոզիվները, քննարկել առանձին մարզերի մետաղածնության առանձնահատկություններն ու հեռանկարները: Չորրորդական ժամանակաշրջանի երկրաբանության վերաբերյալ իր բազմամյա հետազոտությունները նա ամփոփել է „Постмиоценовая история Кавказско-Черноморско-Каспийской области“, մենագրության մեջ, բացահայտելով մի կողմից նստվածքագոյացման, մյուս կողմից երոզիայի, օրոգենեզի և հրաբխայնության ինտենսիվությունը: Նշելով սառցապատման ժամանակահատվածների կապը լեռնագոյացման դարաշրջանների հետ, առաջարկել է ձյան սահմանի դեպրեսիաների սահմանի հաշվարկի նոր եղանակ:

Հարկ է հատուկ նշել Լ.Ա. Վարդանյանցի „Сейсмоструктурная Кавказа“, (1935թ.) մենագրությունը գիտական այդ ուղղության առաջին աշխատությունը: Ելնելով Կովկասի տարածքի դիսլոկացման աստիճանից նա անջատել է չորս կառուցվածքային համալիրներ՝ 1. Հյուսիսկովկասյան պլատֆորմ, 2. Մեծ Կովկասի համալիր, 3. Ռիոն-Քուրի համալիր, 4. Փոքր կովկասի համալիր, տվել նրանց բաղկացուցիչ մասերի մանրակրկիտ նկարագրությունը: Առաջին անգամ նա կազմել է Կովկասի ստրուկտուրային քարտեզը, անջատել դեպրեսիաների, ծալքավոր գոտիների խզվածքների, մեծաբեկորների առանցքային գծերը, հաշվարկել սեյսմիկ ցնցումների նվազեցման արագությունը, ենթադրել երկրաշարժերի հիպոկենտրոնների փոքր խորությունները, կազմել Կովկասի սեյսմիկ օջախների առաջին սխեման, բացահայտելով մի քանի օջախներում ցնցումների միաժամանակությունը՝ նրա պատկերավոր արտահայտությամբ երկրաշարժերի «համերգը»:

Լ.Ա. Վարդանյանցի հետազոտությունների մյուս կարևոր ուղղություններն հանդիսացան բյուրեղօպտիկան, միներալների հետազոտման ֆյոդորովյան մեթոդի տեսությունը և գործնական մասը: Անցյալ դարի 50-ական թվականներին հրատարակվեցին „Триадная теория двойниковых образований минералов“, (1950թ.) և „Триадный метод иссле-

дования двойников плагиоклаза,, (1951թ.) մենագրությունները: Մշակվեց կրկնաբյուրեղների առաջացման նոր տեսություն, ըստ որի կրկնաբյուրեղների առաջացումը ոչ թե պատահական պրոցես է, այլ տարածության մեջ բյուրեղային նյութի զարգացման աստիճանականության դրսևորում:

Լ.Ա. Վարդանյանցի բյուրեղօպտիկայի հետազոտություններին նվիրված ցիկլը ավարտվեց “Теория федоровского метода” (1959թ.) մենագրությամբ, որտեղ առաջին անգամ տրվեց մեթոդի մաթեմատիկորեն մշակված տեսությունը, ֆյոդորովյան սեղանիկի միջոցով բյուրեղների օպտիկական ինդիկատրիսայի որոշման մեթոդաբանությունը:

Լ.Ա. Վարդանյանցի կողմից մշակված նոր մեթոդաբանության սկզբունքներով հրատարակված “Тектоническая карта Кавказа” (Մ 1:1000000) քարտեզը կարևոր նշանակություն ունեցավ այդ տարածքի երկրաբանա-ստրուկտուրային կառուցվածքի վերծանման գործում:

Չափազանց մեծ է Լ.Ա. Վարդանյանցի վաստակը Ռուսական պլատֆորմի բյուրեղային հիմքի ուսումնասիրման գործում: 1957թ. նա կազմեց այդ տարածաշրջանի առաջին երկրաբանական քարտեզը (Մ 1:5000000): 600 հորատանցքերի, այդ թվում ավելի քան 350 հորատանցքերի կետերի անմիջական ուսումնասիրման ու գոյություն ունեցող երկրաֆիզիկական տվյալների հիման վրա առանձնացվեցին չորս ստրուկտուր-հասակային կոմպլեքսներ՝ 1. Ստորին արխեյի գնեյսերի և գրանիտագնեյսերի, 2. Վերին արխեյի պարագնեյսերի և պարաթերթաքարերի, 3. Ստորին պրոտոերոզոյի նստվածքա-մետամորֆային, 4. Վերին պրոտոերոզոյի թույլ փոփոխված նստվածքային ապարների: Հատկապես ընդգծվեց բյուրեղային հիմքի բարդ, բազմահարկային ներքին կառուցվածքը: Այդ աշխատանքն արժանացավ Միջազգային երկրաբանական կոնգրեսի XXI նստաշրջանի բարձր գնահատականին (Կոպենհագեն, 1960թ.): 1964թ. հեղինակների մեծ կոլեկտիվի մասնակցությամբ, Լ.Ա. Վարդանյանցի խմբագրությամբ, կազմվեց Ռուսական պլատֆորմի բյուրեղային հիմքի առավել մանրակրկիտ երկրաբանական քարտեզը (Մ 1:2500000):

Ժամանակակիցները նշում էին Լ.Ա. Վարդանյանցի անսպառ աշխատասիրությունը, պահանջկոտությունը իր և իր շրջապատի հանդեպ, ազնվությունը և սկզբունքայնությունը, գիտությանն անսահման նվիրվածությունը: Հենց այդ սկզբունքայնությունն ու խստությունը որոշակի ազդեցություն ունեցան Լ.Ա. Վարդանյանցի գիտական նվաճումների առավել արժանի գնահատման վրա, քանզի նա, անկախ հեղինակների գիտական կոչումներից և զբաղեցրած պաշտոններից, հատկապես պահանջկոտ ու սկզբունքային էր գիտական աշխատանքների գնահատման հարցում:

Լ.Ա. Վարդանյանցը սերտորեն կապված էր ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական ինստիտուտի (այժմ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների ինստիտուտ) հետ: Նրա հիմնական աշխատությունները, այդ թվում յոթ մենագրություններ, լույս են տեսել Երևանում ՀՍՍՀ ԳԱ

հրատարակչությունում: Երևան այցելությունների ընթացքում նա կազմակերպում էր երկրաբանական հրատապ պրոբլեմների քննարկումներ, արժեքավոր խորհուրդներ տալիս ինստիտուտի աշխատակիցներին և ասպիրանտներին, մնալով նրանց աշխատանքների խիստ և միաժամանակ բարյացկամ գրախոս:

1945թ. Լ.Ա. Վարդանյանցը ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ: Նրա բեղմնավոր աշխատանքային վաստակն արժանացել է Լենինի և Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանների:

Ներկայումս, տասնյակ տարիներ անց, Լ.Ա. Վարդանյանցի առաջարկած մի շարք դրույթներ և եզրակացություններ այլ կերպ են մեկնաբանվում, և դա բնական է ու հասկանալի, սակայն նրա հետազոտությունների մանրակրկիտությունը, հետևությունների խստությունը ու անաչառությունը այսօր ևս հիանալի օրինակ են երկրաբանների երիտասարդ սերնդի համար:

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռ. Լ. Մելքոնյան

ПАМЯТНЫЕ ДАТЫ

**К 85-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ  
АКАДЕМИКА НАН РА Э.Е. ХАЧИЯНА**



Исполнилось 85 лет со дня рождения Хачияна Эдуарда Ефремовича, одному из классиков современной теории сейсмостойкого строительства, академика НАН РА, доктора технических наук, профессора, Заслуженного деятеля науки РА, лауреата Государственной премии РА.

Э.Е. Хачиян родился 17 августа 1933 года в Арцахе (сел. Аракел).

В 1956г. с отличием окончил физико-математический факультет Ереванского государственного университета. В 1956-2002гг. – зав. Лабораторией, зам. директора по науке АрмНИИ сейсмостойкого строительства, в 1972-1988гг. –

профессор Ереванского государственного университета архитектуры и строительства (ЕрГАСУ) и ЕГУ. С 1997г. по настоящее время зав. Кафедрой строительной механики ЕрГАСУ, главный научный сотрудник Института геологических наук НАН РА

Сфера его исследований: прикладная сейсмология, строительная механика, теория колебаний, динамика сооружений, сейсмостойкое строительство. Он автор более 265 опубликованных работ, в том числе 12 монографий, 5 авторских свидетельств, 15 нормативно-инструктивных документов, 60 научных статей на английском языке, опубликованных в разных странах.

Э.Е. Хачиян прошёл путь в науке о сейсмостойком строительстве от ее зарождения в СССР и стоял у истоков современных представлений о сейсмостойкости зданий и сооружений. Он воспитал не одно поколение инженеров и научных работников. После распада СССР и советской научной школы сейсмостойкого строительства Э.Е.Хачиян остался одним из немногих ее представителей. Его учителями были К.С.Завриев, И.Л.Корчинский, С.В.Медведев, И.И.Гольденблат, лидер армянской школы сейсмостойкого строительства академик А.Г.Назаров. Уже в начале 60-х годов Э.Е.Хачиян стал заметной фигурой в области сейсмостойкого строительства. К тридцати годам он опубликовал труд «Некоторые прикладные задачи теории сейсмостойкости сооружений» (1963), а к сорока годам - «Сейсмические воздействия на высотные здания и сооружения» (1973). Эти работы стали базовыми как для него, так и для его последователей.

Э.Е.Хачияну свойственны трудолюбие и целеустремлённость, добро-

желательность и скромность. Его работы базируются на изучении реальных землетрясений и всегда ориентированы на практическое внедрение в сейсмостойкое строительство. Примером может служить детальное изучение Ереванского (1973) и Спитакского (1988) землетрясений. Э.Е.Хачиян сделал сейсмологию более инженерной, что является главным предназначением этой науки. Нельзя не отметить прозорливость юбиляра: его работа «Вращательные движения грунта и крутильные колебания сооружений» (1987) предвосхитили эти эффекты, реально наблюдавшиеся при Спитакском землетрясении. Вся его профессиональная деятельность построена на сочетании глубоких теоретических исследований и обоснований того, что в дальнейшем включается в строительные нормы и проверяется практикой сейсмостойкого строительства. Этот профессиональный, эффективный, наиболее результативный подход был реализован им в новых национальных нормах сейсмостойкого строительства Армении.

Именно Э.Е.Хачиян, единственный из советских специалистов сейсмостойкого строительства, понял и поддержал инициативы IDNDR на территории бывшего СССР, правильно оценил новую, лидирующую роль инженеров для уменьшения сейсмических бедствий.

Его активная, творческая, профессиональная позиция, безусловно, плодотворно повлияла на разработанные в разных странах СНГ новые сейсмические нормы. Созданные им национальные нормы сейсмостойкого строительства Армении являются сегодня значимым, и мы убеждены, далеко не последним результатом его плодотворной научно-практической деятельности. Э.Е.Хачиян считает, что главное его богатство – это его ученики, и мы желаем, чтобы это богатство непрерывно приумножалось.

**Отделение химии и наук о Земле НАН РА, Институт геологических наук, редколлегия журнала “Сейсмостойкое строительство. Безопасность сооружений” (Москва), редколлегия журнала Известия НАН РА Науки о Земле поздравляют Эдуарда Ефремовича Хачияна с знаменательной датой, желают ему крепкого здоровья и новых творческих успехов.**

**ТВОРЧЕСКИЙ ПУТЬ УЧЕНОГО**  
**(к 70-летию члена-корреспондента НАН РА С.М.Оганесяна)**



Известному специалисту в области теоретической и прикладной геофизики, геофизического моделирования и инженерной сейсмологии, советнику директора и зав. отделом инженерной сейсмологии и сейсмостойкого строительства Института геофизики и инженерной сейсмологии (ИГИС НАН РА), член-корреспонденту Национальной академии наук Республики Армения, доктору физико-математических наук, профессору Севада Мкртичевичу Оганесяну исполнилось 70 лет.

С.М.Оганесян родился 30 июля 1948г. в г. Ленинакане (ныне Гюмри). В 1955г. поступил в среднюю школу N 14 г. Ленинакана, которую окончил в 1966г. с серебряной медалью и поступил в Ереванский политехнический институт на факультет технической кибернетики. В 1971г. с отличием окончил институт получив квалификацию инженера-математика.

С.М.Оганесян в 1977г. защитил диссертацию на соискание ученой степени кандидата физико-математических наук, в 1987г. – доктора физико-математических наук по специальности “геофизика”, в 1992г. утвержден в звании профессора.

С.М.Оганесян свою научную деятельность начал с исследования нелинейных обратных задач, к которым сводится интерпретация данных гравиметрических и магнитных наблюдений. Он впервые на основе объединения идей оптимизации и регуляризации ввел в рассмотрение общий итерационный процесс, пригодный для решения линейных и нелинейных систем уравнений, установил его сходимость и регуляризующие свойства и достаточные условия корректности постановки задач геофизики, сформулированных в виде переопределенных систем уравнений. Результаты этих исследований были обобщены в его кандидатской диссертации, которую он защитил в 1977г. в Москве.

С.М.Оганесян одним из первых начал исследования по одной из актуальных проблем построения пространственной плотностной модели исследуемой среды – разработке теоретических и технологических основ устойчивых эффективных алгоритмов решения трехмерных обратных задач гравиметрии (ОЗГ) в рамках концепции математического моделирования. Разработанный и обоснованный им двойственный метод решения линейных и нелинейных некорректных задач геофизики (математической физики) позволяет использовать специфику ОЗГ, уменьшить размерность

решаемых задач на единицу, чем и определяется преимущество двойственного метода по сравнению с известными прямыми методами.

С.М.Оганесян впервые обосновал выбор в качестве условного стабилизатора для решения трехмерных ОЗГ функционал энергии деформации тонкой изогнутой пластинки на упругом основании, разработал вычислительные схемы и программы для решения различных трехмерных ОЗГ.

Изучил свойство оператора решения задачи гравиметрии и его сопряженного оператора, которые позволили ответить на ряд вопросов о размерности ОЗГ и учитывать их при его постановке и решении. Результаты этих исследований были обобщены в докторской диссертации, которую он защитил в Киеве в Институте геофизики АН УССР.

Решением Специализированного Совета диссертационная работа С.М.Оганесяна была квалифицирована как новое, перспективное научное направление в геофизике.

Монография С.М.Оганесяна: “Регулярные методы решения трехмерных задач гравиметрии” (2004), являющаяся переработанным вариантом его докторской диссертации, имеет важное значения для решения практических трехмерных обратных задач гравиметрии и магнитометрии.

После катастрофического Спитакского землетрясения 1988г. научные интересы С.М.Оганесяна были направлены на решение практических геофизических и сейсмологических задач.

Комплекс технологических программ, разработанный С.М.Оганесяном и руководимой им группой открыли возможность развернуть в ИГИС широкомасштабные исследования по построению трехмерной структурно-динамической модели земной коры территории Армении, на основе которой удалось оценить возможные очаговые зоны и сейсмический риск территории Армении и составить соответствующие карты сейсмического районирования масштаба 1:200000.

На основе проведенного широкого круга экспериментальных и методических работ было доказано, что на увеличении сейсмической интенсивности в Ширакской котловине, особенно четко зафиксированное при Спитакском землетрясении, играет мощный слой озерных отложений, который увеличивает длительность, периоды и амплитуды колебаний во всей котловине.

С.М.Оганесян разработал методику позволяющую, исходя из сейсмо-тектонических, сейсмологических, инженерно-геологических условий, оценить ожидаемые количественные параметры колебаний грунтов в виде акселерограмм землетрясений.

С.М.Оганесяном, совместно с соавторами, на основе базовой модели, комплекса геофизических методов построена геофизическая модель Джермакбюрского геотермического поля, выделены его основные геоструктурные элементы и локализованы наиболее перспективные участки для заложения поисково-разведочных скважин.

С.М.Оганесяном опубликовано 196 работ, в том числе одна монография и три методических разработок, подготовлено три кандидата наук.

Некоторые его работы переведены на английский язык и переизданы в США С.М.Оганесян один из авторов фундаментального издания “Грави-разведка. Справочник геофизика” (1981, 1990).

Находясь на посту директора (1989-2013гг.), а затем советника директора ИГИС НАН РА С.М.Оганесян проявил себя инициативным, чувствующим перспективы развития науки, вдумчивым и чутким руководителем.

С.М.Оганесян является членом Отделения химии и наук о Земле НАН РА и его бюро, председателем Специализированного Совета 040 “Геофизика”, членом редколлегии журнала Известия НАН РА Науки о Земле и международного журнала “Геофизический журнал” НАН РУ.

За плодотворную научную деятельность С.М.Оганесян в 1998г. награжден премией им. В.Амбарцумяна, в 2006г. избран член-корреспондентом НАН РА, в 2010г. Европейской академией естественных наук награжден серебряной медалью им. Л.Эйлера.

Свой юбилей С.М.Оганесян встречает полный научных замыслов и творческой активности. Его друзья и коллеги желают ему доброго здоровья, благополучия и дальнейших успехов.

**Отделение Химии и Наук о Земле НАН РА**

**Институт геофизики и инженерной сейсмологии им. акад. А.Г.Назарова НАН РА**

**Редакционная коллегия журнала Известия НАН РА Науки о Земле**

**ԲՈՐԻՍ ՄԱՆՈՒԿԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**  
(ծննդյան 90-ամյակին)



2018թ. դեկտեմբերի 9-ին լրանում է միներալոգիայի, երկրաքիմիայի և պետրոլոգիայի բնագավառներում ճանաչված գիտնական, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի իզոտոպային երկրաբանության լաբորատորիայի վարիչ, գիտության բնագավառում ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, Հայկական միներալոգիական ընկերության նախագահ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Բորիս Մանուկի Մելիքսեթյանի 90-ամյակը:

Բ.Մելիքսեթյանը ծնվել է 09.12.1928թ. Թբիլիսիում: 1944թ., հոր մահից հետո, ընտանիքով տեղափոխվել և բնակություն է հաստատել Երևանում: 1946թ. ընդունվել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկում, որը գերազանցությամբ ավարտել է 1950թ. և ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետի երկրաբանահետախուզական բաժինը: 1955թ. Բ.Մելիքսեթյանը, գերազանցությամբ ավարտելով ԵՊԻ լեռնային ֆակուլտետը, գիտական խորհրդի երաշխավորությամբ նույն թվականին ընդունվում է ՀՍՍՀ ԳԱ ԵԳԻ ասպիրանտուրա «Պետրոգրաֆիա, միներալոգիա» մասնագիտությամբ: Ուսումնառության կուրսը Բ.Մելիքսեթյանն անցել է Լվովի պետական համալսարանում, պետրոգրաֆիայի և միներալոգիայի ականավոր մասնագետ, ակադեմիկոս Վ.Ս.Սոբոլևի ղեկավարությամբ, ինչպես նաև Մոսկվայում, ՍՍՀՄ ԳԱ Հազվագյուտ տարրերի միներալոգիայի և երկրաքիմիայի (ИМГПЭ) ինստիտուտում, պրոֆեսոր Վ.Վ.Լյախովիչի մոտ:

Ասպիրանտական ուսումնառության տարիներին ստացած հիմնավոր գիտելիքները Բ.Մելիքսեթյանը հաջողությամբ զարգացրել է հետագա գործունեության ընթացքում:

Ասպիրանտից մինչև առաջատար գիտաշխատող և լաբորատորիայի վարիչ, մոտ քառասնամյա նրա գործունեությունը մշտապես ուղեկցվել է գիտական հետաքրքրությունների շրջանակների ընդլայնմամբ:

Նա առաջիններից էր, ով Հայաստանի տարածքի տարբեր մագմատիկ համալիրների միներալոգիային, երկրաքիմիային և ակցետոր

միներալներին, ինչպես նաև հազվագյուտ և մետաղածին տարրերին նվիրված ուսումնասիրությունները բարձրացրեց գիտական նոր մակարդակի: Մեղրու խոշոր ինտրուզիվ զանգվածներ կազմող ապարներին նվիրված աշխատանքները Բ.Մելիքսեթյանին լայն ճանաչում բերեցին Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփվեցին «Մեղրու պլուտոնի միներալոգիան և երկրաքիմիան» թեկնածուական ատենախոսության մեջ, որը նա 1961թ. հաջողությամբ պաշտպանեց Մոսկվայի Պետական համալսարանում: Ատենախոսության մակարդակն այնպիսին էր, որ հիմք տվեց համալսարանի Գիտական խորհրդին միջնորդելու ՍՍՀՄ ԲՈՀ-ի առջև թույլ տալու ատենախոսության պաշտպանությունն արդեն որպես դոկտորական ատենախոսություն, սակայն այդ գործընթացն այն ժամանակ չիրականացավ:

Հետագա տարիներին Բ.Մելիքսեթյանն ավարտեց «Թեժսարի ակալային զանգվածի միներալոգիան, երկրաքիմիան և պետրոլոգիական յուրահատկությունները» (1971թ.) և «Կենտրոնական Հայաստանի պորֆիրանման գրանիտոիդային ինտրուզիվների պետրոլոգիան, միներալոգիան և երկրաքիմիան և նրանց մետաղածնական նշանակությունը» (1976թ.) մենագրությունները:

Գործընկերների հետ միասին Բ.Մելիքսեթյանը մշակեց Հայաստանի մագմայականության ֆորմացիոն անալիզի և տարածաշրջանի երկրատեկտոնական զարգացման հիմնական փուլերի հետ նրանց կապի առավել ընդհանուր հիմնահարցերը:

1970-1971թթ., ՀՍՍՀ ԳԱ Նախագահության որոշմամբ, Բ.Մելիքսեթյանը նշանակվում է ՀՍՍՀ ԳԱ ԵԳԻ N 1 արշավախմբի ղեկավար և սկսում Հայաստանի տարածքում հազվագյուտ մետաղական հումքի համալիր երկրաբանական-կանխատեսումային հետազոտական աշխատանքները ՍՍՀՄ ԳԱ առաջատար (ИГЕМ, ВЦЕГЕИ, ВИПГ) ինստիտուտների և ՍՍՀՄ Երկրաբանության մինիստրության Կոլցովյան արշավախմբի հետ համատեղ: Այս աշխատանքների արդյունքները Բ.Մելիքսեթյանն ամփոփել է «Կենտրոնական Հայաստանի տարածքում հանքային հումքի կանխատեսման սկզբունքները» աշխատության մեջ, որի արդիականությունը և նշանակությունը երկրի տնտեսական զարգացման համար դժվար է գերազնահատել:

Այդ տարիների պետրոլոգիական հետազոտությունները հիմք հանդիսացան ՀՍՍՀ տարածքի մագմայականության և մետամորֆիզմի 1:200000 մասշտաբի քարտեզի, ինչպես նաև պալեոգեն-նեոգենի հասակի ինտրուզիվ և ենթահրաբխային համալիրների ռադիոերկրաքիմիական տիպերի հատուկ քարտեզի կազմման համար, որոնք էլ, իրենց հերթին, օգտագործվեցին Հայաստանի և Կովկասի ընդհանուր և հատուկ կանխատեսումային-մետաղածնական քարտեզների կազմման ընթացքում:

1989թ. Բ.Մելիքսեթյանը Թբիլիսիում, Վրաստանի ԳԱ Երկրաբանական ինստիտուտի գիտական խորհրդի նիստում փայլուն պաշտ-

պանեց «Փոքր Կովկասի պալեոգեն-նեոգենի հրաբխահնտրուզիվ ֆորմացիաների պետրոլոգիան, երկրաքիմիան և հանքաքերությունը (կոլիզիայի զոնաների մագմատիզմ)» դոկտորական ատենախոսությունը և ստացավ գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Այդ աշխատության մեջ Բ.Մելիքսեթյանը մշակել ու համակարգել է հսկայական ծավալով հեղինակային և գրական նյութ Փոքր Կովկասի և Ռոդոպիից մինչև Հիմալայներ ձգվող ծալքավոր գոտու մագմայականության, կառուցվածքային, երկրաքիմիական և միներալոգիական առանձնահատկությունների վերաբերյալ, ի հայտ է բերել կայուն օրինաչափություններ, ինչպես նաև ստեղծել է ՀՀ տարածքի կայնոզոյան հասակի հանքամագմային մոդելը: Առաջին անգամ Փոքր Կովկասի համար կազմվել է ինտրուզիվ ապարների պետրոլոգաերկրաքիմիական տիպերի քարտեզ՝ կալիումի, արգոնի և ստրոնցիումի իզոտոպների հարաբերության վարիացիաների տրենդներով: Ընդհանրացվել են մագմայականության էվոլյուցիայի գլխավոր օրինաչափությունները սեդիման և ընդարձակման երկրադինամիկ ռեժիմների ժամանակ, ուսումնասիրվել ապարկազմող և ակցեսոր միներալների կազմը և տիպամորֆ հատկությունները՝ որպես պետրոգենեզի ցուցիչներ, հիմնավորվել մագմաների ծագման և կեղևի հետ նրանց փոխազդեցության մոդելները, գնահատվել է ուսումնասիրված ֆորմացիաների պոտենցիալ և իրական հանքաքերությունը: Այս բազմակողմանի հետազոտությունները մեծ ճանաչում գտան ՍՍՀՄ առաջատար պետրոլոգների մոտ, արժանացան նրանց բարձր գնահատականին և Փոքր Կովկասի կայնոզոյան մագմատիզմի մասին մեր գիտելիքները բարձրացրեցին նոր աստիճանի:

Կյանքի վերջին տարիներին Բ.Մելիքսեթյանը սկսեց մինչքեմբրյան և ֆաներազոյան մագմատիկ և հանքային ֆորմացիաների իզոտոպային-երկրաքիմիական հետազոտությունների հետևողական իրականացումը: Այս հետազոտությունների նպատակը մանթիա-կեղև-ջրոլորտ համակարգում Փոքր Կովկասի լիթոսֆերայի էվոլյուցիայի մոդելի մշակումն էր: Այս աշխատանքները, ինչպես և շատ այլ գիտական ծրագրեր, մնացին անավարտ, բայց իրենց նորարական մոտեցմամբ նրանք այժմ էլ կարող են հիմք հանդիսանալ հետագա պետրոլոգիական հետազոտությունների իրականացման համար:

Բ.Մելիքսեթյանը հեղինակ է ավելի քան 110 գիտական հոդվածների և մենագրությունների: Նրա հետազոտությունների արդյունքները բազմիցս ներկայացվել են միջազգային, համամիութենական և հանրապետական գիտաժողովներում: Բ.Մելիքսեթյանը «Հայկական միներալոգիական ընկերության զեկուցագրի» 11-րդ և 12-րդ պրակների պատասխանատու խմբագիրն էր, ԵԳԻ մասնագիտացված երկրաքիմիական սեկցիայի գիտական խորհրդի նախագահը, ՀՍՍՀ ԳԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրական կոլեգիայի և ԵԳԻ գիտական խորհրդի անդամ:

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ.Մադաթյանի ղեկավարությամբ կազմված և հրատարակված «Հազվագյուտ և ազնիվ տարրերը Հայկական ՄՍՀ հանքային ֆորմացիաներում» (1972) աշխատության համար Բ.Մելիքսեթյանը, համահեղինակների հետ միասին, արժանացել է ՀՍՍՀ Պետական մրցանակի գիտության բնագավառում: Նրա գիտական նվաճումները նշվել են նաև ՀՀ ԳԱ «Գովեստագրով» և «Վաստակագրով»:

Բ.Մելիքսեթյանը ճանաչված, մեծ հեղինակություն ու համբավ վայելող գիտնական էր ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նրա հետ երկար տարիներ համագործակցել են նախկին ԽՍՀՄ խոշոր գիտական կենտրոնների այնպիսի ճանաչված գիտնականներ, ինչպիսիք էին Վ.Կոպտև-Դվորնիկովը, Լ.Տաուսոնը, Վ.Լյախովիչը, Մ.Տավրսկայան և ուր.:

Բ.Մելիքսեթյանի ողջ կյանքը և բազմամյա գործունեությունը նշագրված էր ընկերների նկատմամբ ջերմ և բարյացկամ վերաբերմունքով, նոր գաղափարներով շռայլորեն կիսվելու պատրաստակամությամբ և հատուկ ուշադրությամբ երիտասարդ գիտնականների հանդեպ:

Բ.Մելիքսեթյանին բնորոշ էին համեստ պահվածքը աշխատանքային կոլեկտիվում և հատկապես դաշտային արշավախմբային պայմաններում: Տարիները չեն ստվերել բարի հիշողությունները նրան ճանաչող ընկերների սրտերում և այսօր, ծննդյան 90-րդ տարեդարձին, նրան ճանաչողները խոր հարգանքով ու երախտագիտությամբ են հիշում իրենց ավագ գործընկերոջը՝ մեծ գիտնականին, քաղաքացուն, իր գործին նվիրված անձնավորությանը՝ Բորիս Մանուկի Մելիքսեթյանին:

**ՀՀ ԳԱԱ Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք**

**ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ**

**ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն**

## ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում հունիս-հոկտեմբեր ամիսներին տեղի են ունեցել հետևյալ սեմինարները:

1. Հունիսի 29-ին «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների հիմնախնդիրները, տարածական տվյալների բազայի կառուցվածքը»  
Զեկուցող՝ Երկրաբանական տեղեկատվության լաբորատորիայի աշխատակից, ճարտարագետ՝ **Հարություն Ուլոյան**
2. Օգոստոսի 2-ին «Նայելով անցյալ և ետ: Մեյսմոլոգիական ուսումնասիրությունների մեկ տարին երկրաբանական գիտությունների ինստիտուտում» (Looking Back and Ahead: One Year of Seismology Research in the Institute of Geological Sciences)  
Զեկուցող՝ Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիայի պրակտիկանտ՝ **Նատաշա Բեդնարց** (Natasha Bednarz)
3. Օգոստոսի 30-ին «Հայաստանի կենտրոնական և հյուսիսային տարածաշրջանների չորրորդական հասակի տուֆ-ինգնիֆերիտային առաջացումների պետրոլոգիական և շերտագրական առանձնահատկությունները»  
Զեկուցող՝ Հրաբխագիտության լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող՝ **Հրիսիսինե Գևորգյան**
4. Հոկտեմբերի 19-ին Ակադեմիկոս Ա.Ա. Գաբրիելյանի ավանդը Հայաստանի շերտագրության և տեկտոնիկայի ասպարեզում  
Հեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Հ.Հ. Մելիք-Ադամյան, Ն. Ավագյան  
Զեկուցող՝ **Ա. Գրիգորյան**

## Վոնֆերանսների մասնակցություն

- Մայիսի 22-30 Լիթվոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի վարիչ Լ. Սահակյանը մասնակցել է “IGCP 630 CONFERENCES AND FIELD EXCURSION ON THE PERMIAN-TRIASSIC EXTINCTION EVENT IN ARMENIA” զեկույցով Վուհանի համալսարանում (Չինաստան) կազմակերպված “Deep-time extreme event & biotic responses” միջազգային կոնֆերանսին, հեղինակներ՝ Lilit Sahakyan, Aymon Baud
- Օգոստոսի 26-29 Լիթվոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի աշխատակիցներ Հայկ Հովակիմյանը և Քրիստինա Սահակյանը որպես կամավորներ մասնակցել են Վրաստանում կազմակերպված PRIDE-RCMNS միջազգային կոնֆերանսին: Ներկայացվել է զեկույց “NEW DATA ON THE UPPER MIOCENE CONTINENTAL RECORD OF ARMENIA” թեմայով,

հեղինակներ՝ Davit Vasilyan, Lilit Sakahyan, Hayk Hovakimyan, Lutz Maul, Jeremy Kesner

- Մեպտեմբերի 23-27-ը Լիթոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի աշխատակիցներ Լիլիթ Սահակյանը և Քրիստինա Սահակյանը մասնակցել են կենտրոնական Եվրոպայի կոնֆերանսին նվիրված Գեոմորֆոլոգիային և չորրորդական երկրաբանությանը (Գիսսենի Ջուստուս-Լայբիխ համալսարան, Գերմանիա)։ Ներկայացվել են հետևյալ աբստրակտները։

1. Geo-archaeological and archaeometric studies at the Aknashen settlement (Armenia)

*\*Lilit Sahakyan, Ara Avagyan, Arkadi Karakhanyan, Ruben Badalyan, Andreas Iordanidis, Tatul Atalyan, Kristina Sahakyan*

2. Pollen and plant diversity in terrestrial sediments of the Jradzor area (Armenia) *Kristina Sahakyan, Anahit Atoyants, Hayk Hovakimyan*

Նոյեմբերի 6-7, Լիոն (Ֆրանսիա) տեղի կունենա միջազգային կոնֆերանս նվիրված երկրաբ. գիտ. դոկտոր Արկադի Կարախանյանին

Կոնֆերանսի կազմակերպիչներից է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը (Խաչատուր Մելիքսեյան)

Ինստիտուտի գիտաշխատողների կողմից կներկայացվեն հետևյալ 5 զեկույցները

1. *1.Kh. Meliksetian, A. Karakhanyan, R. Badalyan, I. Neill, A. Avagyan, A. Harutyunyan, Kh. Makaryan, S. Balasanyan, G. Navasardyan, D. Miggins, A. Koppers.* Holocene volcanism and human occupation in Armenia: new data.
2. *Avagyan1, J.-F. Ritz, P.-H. Blard, K. Meliksetian, P. Munch, P. Valla, K.S. Tokhatyan, M. Mkrtchyan, T. Atalyan.* Volcanic eruptions witnessed by prehistoric people in Armenia.
3. *S. Balasanyan, A. Karakhanyan, Kh. Meliksetian.* Archaeoseismological studies of the eastern branch of the Syunik pull-apart basin structure.
4. *Kh. Makaryan, A. Karakhanyan, S. Balasanyan.* Analysis of soil liquefaction effect: new evidence on the seismic activity of the Syunik highland (Armenia).
5. *S. Joannin, V. Ollivier, O. Bellier, P. Tozalakian, A. Karakhanyan, B. Perello.* Upper Holocene vegetation history from the Kalavan Red Lake in Armenia.

**ՀՀ ԳԱԱ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱՆԱՎՈՐ  
ԳԻՏՆԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ՝  
ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ**

Գիտաժողովի բացումը՝ 2019թ փետրվարի 7-ին

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ դահլիճում

Գիտաժողովի թեմատիկան՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Կնքվել է համագործակցության հուշագիր ՀՀ ԳԱԱ Երկրաբանական  
գիտությունների ինստիտուտի և Շվեդարիայի Ջուրասիկ  
թանգարանի (ք. Պուտենտոյ) միջև:

Լ. Սահակյան

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

Заказ N 876

Подписано к печати 18.07. 2018 г. 4,5 печ. л.  
Бумага офсетная N 1. Тираж 150 экз. Цена договорная.  
Типография издательства “Гитутюн” НАН РА.  
0019, Ереван, пр.Маршала Баграмяна 24.